ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝ Նարինե Նորեկյան, Սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Տաջիկստանի Հանրապետություն, ք. Դուշանբե 2025 թվականի մայիսի 13-ից 15-ը:

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային բանկ

4. Գործուղման նպատակը՝

Հանրային ծախսերի կառավարման գործընկերային ուսուցման ցանցի (PEMPAL) կողմից կազմակերպվող լիագումար նիստի ընդհանուր նպատակն էր հնարավորություն ընձեռել վերանայելու և քննարկելու բյուջետավորման առաջնահերթ թեմաները, ինչպես նաև պլանավորելու Բյուջետային Համայնքի գործունեությունը ապագայի համար:

5. Քննարկված թեմաները՝

Նիստի ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

- Պետական ֆինանսների կառավարումը Տաջիկստանում, համակարգի վերանայում,
- Արդյունքների վրա հիմնված բյուջետավորման շրջանակներում որոշումների կայացում, արդյունքների հետ կապված տեղեկատվության արդյունավետ օգտագործման եղանակները,
- Բյուջեի թափանցիկության և հանրային ներգրավվածության բարձրացում/արդիականացում,
- Գենդերային ասպեկտների հաշվառում բյուջետավորման մեջ՝ գործողության և ազդեցության վրա հիմնված մոտեցում,
- Բյուջետային պրակտիկայի համայնք գործունեության և գործունեության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության թարմացում և հետագա գործունեության վերաբերյալ անդամների կարծիքների հավաքագրում,
- Նիստի արդյունքների ամփոփում և եզրափակիչ ելույթներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տարածաշրջանային աշխատաժողովին ներկա են գտնվել 19 երկրի մասնակից:

Համաժողովի ընթացքում ներկայացուցիչների կողմից ներկայացվել են զեկույցներ և դասախոսություններ, որոնք ուղեկցվել են հարցուպատասխանի ռեժիմով: Ներկայացված զեկույցներին և դասախոսություններին հաջորդել են պանելային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցների կողմից ներկայացվել են իրենց երկրներում ծրագրային բյուջետավորման փորձը, առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել քննարկումներ:

Հանդիպման ընթացքում պահանջված շնորհանդեսի տեսքով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության բյուջեի պլանավորման և բյուջետային ծախսերի արդյունավետ օգտագործման գծով կիրառված բարեփոխումները:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ձեռքբերված գիտելիքները լայն հնարավորություն ստեղծեցին ծանոթանալու միջազգային լավագույն փորձին, որոշ կարգավորումների մասով քննարկելու դրանք ընթացիկ աշխատանքներում կիրառելու նպատակահարմարության հարցը:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

(Ստորագրություն)

22 մայիսի, 2025թ.